27.11.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
նոյեմբերի 26 -ի N 1859 - Ա որոշման

«ՀԱՅԿ-88» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Երևանում առկա այգիներն ու պուրակները հիմնականում կառուցվել են խորհրդային տարիներին: Ժամանակի ընթացքում անցնելով փորձությունների միջով՝ դրանք կորցրել են իրենց նախնական տեսքը և շատ դեպքերում վերածվել չորային, ոչ բուսածածկ գոտիների:

Ըստ նախատեսված ծրագրի՝ այստեղ կյանքի կկոչվի նոր նախագիծ, որը ենթադրում է պուրակի կազմակերպում, բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցում: Նախագծի շրջանակում 10028.29 քմ մակերեսով հողամասում կկազմակերվի պուրակ, որտեղ նախ խնամվելու, էտվելու և նոր տեսքի են բերվելու գոյություն ունեցող ծառերը, ինչպես նաև նախատեսվում է շուրջ 5 հազար տարատեսակ բույսերի, բուսատեսակների, ծառերի, թփերի տնկում: Կառուցվելու են նաև շատրվան, մանկական զարգացման և SS կենտրոն, ամֆիթատրոն, որը տրամադրվելու է համերգային, թատերական երիտասարդ խմբերին, որոնք հանդես կգան այգու այցելուների համար:

Ծրագրի հաջորդ կարևոր հատվածը բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցումն է: Մեկ ծածկի տակ համախմբվելու են բազմաֆունկցիոնալ կենտրոնի բոլոր տիպի սպասարկման հատվածները՝ ապահովելով ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատասխան միջավայր, հարմար ժամանցի, սննդի, ցուցահանդեսների, առևտրի, երիտասարդների և երեխաների զարգացման և զվարճանքի համար: Կառույցի հետնամասում մոտ 60-70 մետր հատված լինելու է ապակեպատ, որտեղից մուտք է բացվելու դեպի այգի: Այնտեղ կլինի փոքր հրապարակ, որը նույնպես նախատեսվում է օգտագործել փառատոնների, միջոցառումների, համերգների համար: Նախատեսված են նաև բազմաֆունկցիոնալ դահլիճներ՝ մարզվելու, պարի, երգի, նկարչության, քանդակագործության, ծրագրավորման դասարանների համար:

Ծրագրով նախատեսվում է.

- կառուցվող բազմաֆունկցիոնալ կենտրոնի ընդհանուր մակերեսը կկազմի շուրջ 5000 քմ մակերես.
- ամֆիթատրոնի մակերեսը կկազմի շուրջ 200 քմ, որտեղ կլինի մոտ 300 նստատեղ.

- ստորգետնյա ավտոկայանատեղի շուրջ 1800 քմ մակերեսով՝ նախատեսված շուրջ 55 մեքենայի համար և վերգետնյա ավտոկայանատեղի՝ շուրջ 50 մեքենայի համար.
- մանկական զարգացման և SS կենտրոն՝ շուրջ 2500 քմ.
- հեծանիվների կայանատեղի՝ շուրջ 80 հեծանիվների համար.
- շատրվան (ջրավազան)՝ շուրջ 400 քմ.
- շուրջ 5000 տարատեսակ ծառերի, թփերի, բույսերի տնկում:

Ծրագրի իրականացումից հետո ընկերության կողմից Երևանի բնակիչների համար կկառուցվի Կոմիտասի պողոտան հատող վերնանցում (վերգետնյա հետիոտնային անցում), որը իրար կկապի Արաբկիր մանկական զբոսայգին և քննարկվող այգին:

Ծրագրով նախատեսված ընդհանուր ներդրումները կկազմեն շուրջ 10 մլն. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ որից այգու բարեկարգման և վերակառուցման համար՝ մոտ 1 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որն ուղղվելու է ամֆիթատրոնի կառուցման, շատրվան-ջրավազանների կառուցման, կաթիլային ոռոգման ապահովման, լուսավորության և այլն աշխատանքների իրականացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի շուրջ 250 ժամանակավոր աշխատատեղ՝ շինարարության ոլորտում (ներառյալ կապալառու ընկերությունների աշխատակիցները), և 300 մշտական աշխատատեղ՝ հետագա սպասարկման ոլորտում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ